
**«ՄԱՍԻՍԸ» ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

ՍՈՂՈՄՈՆՅԱՆ Գ. Ա.

Հայտնի է, որ 1884 թ. Կ. Ություճյանը «Մասիսի» արտոնատիրությունը վաճառեց «Արևելքի» վարչությանը՝ պատրաստականություն հայտնելով աշխատակցել երեք տասնյակից ավելի տարիներ իր խմբագրած այդ լրագրին: Այս կերպ «Մասիսը» շարունակեց իր հրատարակությունը մինչև 1887 թ. իբրև շաբաթաթերթ: Նույն թվականի հունվարից (N 3855) լրագիրը հանձնվեց Ա. Արփիարյանի խմբագրությանը՝ հետևյալ ազդով. «Բավական ժամանակե ի վեր «Մասիս» շաբաթաթերթը ըստ բավականին լավ չէր խնամված:

«Արևելքի» վարչական խորհուրդն հանձնեց «Մասիսի» խմբագրության հոգն յուր անդամներն Արփիար Արփիարյանի: «Մասիս» պիտի նրկատվի ազատ բեմ մը, ուստից պիտի կրնան լսվիլ ազգային ամեն կարգի խնդրոց վրա տարբեր տարբեր տեսություններն»¹:

Մի կողմ թողնելով 1884-1887 թթ. «Մասիսի» բովանդակության և ընթացքի նկարագիրը՝ այստեղ միայն նկատենք, որ «Արևելքից» այն հետ էր մնում իր լրատվության նեղ սահմաններով, իրականության ուշացած անդրադարձումներով, ոչ քիչ դեպքերում՝ այդ իրականության սուր անկյունները շրջանցելու մտայնությամբ: Ավելին, «Մասիսը» կարծես դարձել էր «Արևելքի» դժգույն արտացոլումը՝ չունենալով այս վերջինի ճկունությունն ու լրատվական բազմազանությունը: «Արևելքի» վարչությունը Արփիարյանից ակնկալում էր «Մասիսի» վերածնությունը և չէր սխալվում: «Մասիսի» նոր խմբագիրը լրագրական լուրջ դպրոց էր անցել «Արևելքում»՝ 1884 թ. ի վեր հանդես գալով իբրև նրա խմբագիրներից մեկը՝ հրապարակախոսական նոր, համարձակ մոտեցումներով, շիտակ խոսքով և կյանքի ակնհայտ ու մոռացված ծալքերը նորովի լուսաբանելու լրագրական տաղանդով («Արևելքի» «Օրվան կյանքը» խորագրով քրոնիկները): «Մասիսում» Արփիարյանը շարադրեց իր խմբագրական սկզբունքները, որոնք իր գործունեության շարունակությունն ու զարգացումն էին լինելու: Նա առանձնացնում է երեք կարևոր խնդիրներ, որ, ըստ էության, նախանշելու էին «Մասիսի» ժողովրդավարական ուղղությունն ու բովանդակությունը: Խմբագիրը, կարծում է նա, «իբրև ներկայացված ամեն հողվածի մեջ պետք է պահանջե նախ հողվածագրին անկեղծությունը, բարեխղճությունը և հմտությունը: Խմբագիրն ինք պիտի դատե, թե հողված մը իսկապես կպարունակե այդ երեք հատկությունները: Խմբագիրը կրնա սխալիլ յուր դատողությանց մեջ, սակայն պարտավոր է ամենն նվազ սխալական լինիլ և քիչ սխալվելու կենսական պայմանն է՝ ազատ լինիլ ամեն անձնական նկատումներն, վեր լինիլ ամեն կրքերն»²:

¹ Մասիս, 1887, N 3855, էջ 1:

² Նույն տեղում, N 3866, էջ 93:

«Մասիսում» Արփիարյանը ըստ ամենայնի հետևում էր իր կանխագծած խմբագրական ընթացքին: Շաբաթաթերթն այս իմաստով պետք է առանձնանար քննադատական ուղղությամբ, ազգային կյանքի թերությունները վեր հանելու այն հետևողականությամբ, որ արևելահայ կյանքում կիրառում էր Գր. Արծրունու «Մշակը», և որի համոզված հետևորդն ու երկրպագուն Կ. Պոլսում մնում էր Արփիարյանը: Նրա «Մասիսը», ինչպես և «Արևելքն» ու «Մշակը», հայ մամուլի մեջ առանձնանում էր իր հարուստ լրատվությամբ, որ ի հայտ էր գալիս ոչ միայն որոշակի բաժինների նյութերում, այլև իր՝ Արփիարյանի «Օրվան կյանքը» խորագրով հրապարակումներում (*Հրապարակումներ*): Նույն լրատվական բնույթն ունեին նրա «Պոլսական դեմքեր» շարքը և «Մասիսի» «Արձագանք» խորագրով նյութերը, որոնք հանրագումարի էին բերում անցած շաբաթվա լուրերն ու նորությունները՝ իբրև մամուլի տեղեկատվության քննական տեսություն, որ ժանրային նորություն էր արևմտահայ մամուլում:

«Մասիսի» «Օրվան կյանքը» խորագրով քրոնիկները վերաբերում են հայ իրականության ամենատարբեր կողմերին՝ Կ. Պոլսի և գավառների ազգային ու հասարակական կյանքի ուշագրավ իրողություններին, ազգային ու մշակութային գործիչներին, դպրոցին, հոգևորականությանն ու եկեղեցուն և այլն: Իր լրատվական դիտարկումները Արփիարյանը մատուցում է քննական որոշակի հայեցվածքով, որի տպավորիչ ուժը հրապարակախոսն ապահովում էր կոնկրետ հասցեագրումներով: Նրա քրոնիկները և վերլուծական հոդվածները հազեցած են ճանաչողական լուրջ որակներով: Արփիարյանի գրչի ներքո իրենց բնութագրական կողմերով նկարագծվում են ժամանակի պոլսահայ շատ գործիչներ, Ազգային ժողովի երեսփոխաններ, մշակութային և գրական դեմքեր և այլն: Զուսպ և համառոտ դարձվածներով Արփիարյանը ընթերցողին ներգրավում է շնչող միջավայրում, որի պատկերումը հասնում է ճշմարտացիության: Ահա Ազգային ժողովի նիստի անցած-գնացած պարզունակ «եղանակի» նկարագրությունը. «Ոչ մի եպիսկոպոս կա, ով պիտի նախագահե, ով պիտի օրհնի երեսփոխանաց գործերը... Ատենապետ Էֆենտի կիրամայե բարապանի մը՝ երթալ նախագահ մը, եպիսկոպոս մը բերել տերոզիթեն (բառացի՝ պահեստի սենյակ, իտալ. - Ս. Գ.) և բարապանը կերթա ուղղակի հերուսադեմատուն, ուր միշտ առձեռն նախագահներ ու պատրիարքներ կգտնվին: Քիչ վերջ կուգա Սիմեոն եպիսկոպոս, լռիկ-մնջիկ, կամացուկ, անոտ-նաձայն քալելով, կարծես բոկոտն է»³: Արփիարյանի գրիչը շարժվում է սրամիտ և անսպասելի ուրվագծումներով, որ պայմանավորում են դիմանկարի կենդանի և ցայտուն պատկերը՝ մնալով ընթերցողի հիշողության մեջ: Հետաքրքիր է երեսփոխանական ժողովի ատենադպիր Տամատյանի դիմաստվերը. «Ատենադպրի աթոռին վրա նստած է եգիպտական մումիա մը՝ Տամատյան Էֆենտի»⁴: Նույն կերպ ներկայացված են Մ. Աղաբեկյանը, Հ. Մերեմ-Գուլին, Հ. Նուրյանը, Նար-Պեյը և այլ գործիչներ: Թռուցիկ այս ուրվագծերն իրենց արվեստի ուժով և ընդհանրացումներով չեն հասնում պարոնյանական երգիծանքին, սակայն աչքի են

³ Նույն տեղում, N 3871, էջ 134:

⁴ Նույն տեղում:

ընկնում զավեշտական և ճշմարտացի նկարագրով և «երգիծաբանի ճշմարիտ առավելություններով»⁵:

Իր քրոնիկներում Արփիարյանը լրագրության առջև դնում է իրատեսական խնդիրներ՝ առաջարկելով ուշադրություն դարձնել ազգային իրականության ցավոտ կողմերին՝ նորոգել պատրիարքի, քաղաքական ու կրոնական ժողովների գործելակերպը, հաղթահարել սրանց միջև մշտապես նկատվող փոխադարձ անվստահությունն ու «խանգարումները» («Նոր պատրիարքի մը և նոր քաղաքական ժողովի մը պետքը»): Արփիարյանը չի վարանում քննադատել պատրիարք Հ. Վեհապետյանին և Ազգային ժողովի ատենապետ Հ. Նուրյանին՝ ցույց տալով, որ նրանց ժողովրդականության նվազելու պատճառը իրականության սուր խընդիրներից խուսափելն է, նրանց ոչ սկզբունքային մոտեցումը իրենց տնօրինությանը հանձնված գործերին:

Ուշագրավ դիտողություններով ու ընդհանրացումներով է լեցուն Հրազդան-Արփիարյանի «Պոլսական դեմքեր» շարքը: Բարքերի, հոգեբանության ճշմարիտ վերարտադրությունը 1840-1880-ական թթ. շարունակում էր մնալ հայ լրագրության հետաքրքրությունների կենտրոնում: Սրամիտ երգիծանքի ենք հանդիպում Արփիարյանի այս շարքի «Օրթագեղցին» ակնարկում, որ մասամբ հիշեցնում է Հ. Պարոնյանի «Պտույտ մը Պոլսո թաղերուն մեջ» ակնարկաշարը: Օրթագեղցին, գրում է Արփիարյանը, «միշտ և հանապազ ազգային որևէ գործի մը գլուխ է՝ առանց երբեք հավատք ունենալու: Ուսումնասեր է, կրթության պաշտպան է, բայց երբեք չխորհիր յուր դպրոցին վրա: Կրոնասեր է, մինչև իսկ կրոնամոլ, առանց, սակայն, եկեղեցի երթալու»⁶: Դժվար չէ նկատել, որ «Մասիսի» խմբագիրը մամուլից ու լրագրությունից ակնկալում էր իրականության խորքերը թափանցելու, սթափ և քննական մոտեցումների կարողություն, որ համաքայլ էր լինելու նոր ռեալիստական գրական ուղղությանը: Այս ուղղությունը նկատի ուներ Արփիարյանը, երբ ձևակերպում էր ինքնուրույն վիպագրության պահանջը. «Այդ ուղղությամբ գրված վեպեր ապաքեն մեծագույն օգուտ կհայթայթեն ժողովրդյան, քան եվրոպական վեպեր, ոյց նկարագրած իրերն ու բարքերը չեն համաձայնիր մեր սովորությանց»⁷, - գրում է նա:

Եվ այսպես, գրականության և լրագրության առաջնահերթ խնդիրն է բարքերի և սովորությունների վերհանումը, բայց դա ոչ թե ինքնանպատակ պետք է լինի, այլ հետամտի առկա թերությունների, բռնության ու կամայականության վերացումը: Եվ հենց այստեղից էլ սկիզբ էին առնում «Մասիսի» լրագրողների և ազգային իշխանությունների, առաջինների և օսմանյան իրականության սուր տարաձայնությունները: Հիրավի, Կ. Պոլսի Ազգային վարչությունը, մասնավորապես Հ. Նուրյանը և պատրիարք Հ. Վեհապետյանը, հիվանդագին էին արձագանքել իրենց դեմ ուղղված՝ «Մասիսի» քննադատական ելույթներին՝ սպառնալով դիմել նրան լռեցնելու «օրինական միջոցներու»: Դրան Արփիարյանը պատասխանեց, որ պատրիարքը և Նուրյանը վրդովվել են հենց այն պատճառով, որ «Մասիսի»

⁵ Տե՛ս **Արփիարյան Ա.**, Կարմիր ժամուց, Վենետիկ, 1956 (Հ. Ճանաչյանի Առաջաբանը, էջ 7):

⁶ Մասիս, 1887, N 3870, էջ 127:

⁷ Նույն տեղում, N 3872, էջ 143:

քննադատական սլաքները հասել են իրենց նպատակին, և ինքը խոստանում է տեղի չտալ նրանց սպառնալիքներին, «մազի չափ չշեղիլ մեր ընթացքեն»⁸:

«Մասիս» դեմ ուղղված հալածանքի դրվագներից էին նաև Կարակոմրուկի (Կ. Պոլսի թաղ) եկեղեցու քահանաների բողոքը՝ իրենց անվանարկող մի նյութ տպագրելու վերաբերյալ (թեև այն իրականում կապ ուներ հին ժամանակներում պատահած մի դեպքի հետ), Ազգային ժողովի որոշ ջոջերի գործողությունները՝ այդ ժողովի նիստերը իբր խեղաթուրված ներկայացնելու առթիվ և այլն: Ըստ երևույթին, 1887 թ. ապրիլին սկըսված Ազգային վարչության ճնշող, այնուհետև հետապնդող ձեռնարկումները Արփիարյանի հանդեպ և վերջինիս անկախ դիրքը պետք է հասցնեին այն բանին, որ չափավոր ազատամիտ, սակայն կտրուկ հարաբերությունների դեպքում միշտ իշխանամետ «Արևելքի» վարչությունը բռներ Ազգային ժողովի ջոջերի կողմը: Տարաձայնությունները «Արևելքի» վարչության և Արփիարյանի միջև հասան հակամարտության աստիճանի: Վերջինս հարկադրված էր «Մասիսից» հեռանալ 1887 թ. հունիսի 13-ին, որ երևում է շաբաթաթերթի այդ համարից (N 3877)՝ «Ազգային մի քանի խոսք» խմբագրականով: Խմբագիրն այստեղ հայտնում է, թե ինքը համոզված է իր գործելակերպի ճշմարտացիության մեջ՝ նշելով. «ընդհանուր ուղղության մեջ այն հաստատ համոզմամբ ընթացա, թե... հավասարությունն ամենուն համար, բարեկամ, թե թշնամի, ծանոթ. թե անծանոթ, աղքատ, թե հարուստ. խեղճ քահանայն թե գորավոր պատրիարք մը... ամենքն ալ հավասարապես քննադատության առարկա պետք է լինին, երբ ազգային գործոց մեջ են»⁹:

Այսպես ավարտվեց Արփիարյանի կողմից «Մասիսը» խմբագրելու առաջին շրջանը (1887 թ. հունվարի 10-ից (N 3855) մինչև նույն թվականի հունիսի 13-ը (N 3877): Կարծում ենք, որ անկեղծ է «Արևելքի» վարչական խորհրդի հայտարարությունը Արփիարյանի հեռանալու առթիվ, այն, որ վերջինս «Մասիսը» խմբագրել է վարչությունից անկախ, իր խմբագրությամբ և պատասխանատվությամբ¹⁰:

Արփիարյանի հեռանալուց հետո «Մասիսը» վերադարձավ, եթե ոչ լրիվ, ապա ինչ-որ չափով, իր յուրահատուկ կեցվածքին՝ պահպանելով գավառական կյանքի հանդեպ հետաքրքրությունը, սակայն կորցնելով դրա խորքերը թափանցելու կարողությունները, ինչպես և քննադատական վերաբերմունքը իրականության հրատապ խնդիրների հանդեպ: Երկրորդական հարցերի արծարծումով «Մասիսը» փորձում էր ստեղծել անաչառ և քննական դիրքորոշման պատրանք: Այսուհանդերձ, Արփիարյանը լրիվ չէր խզել իր կապերը շաբաթաթերթի հետ, ճիշտ այնպես, ինչպես «Արևելքի» իր համախոհները՝ Լ. Բաշայանը և Հրանդը (Մելգոն Կյուրճյան), նա երբեմն աշխատակցում էր «Մասիսին»: 1888 թ. «Մասիսը» դարձյալ հանձնվեց Արփիարյանին. այդ թվականի մայիսի 1-ի խմբագրականում նա հայտնում է. «Այժմ «Մասիս» մեր տնօրենության կհանձնվի», և իր նպատակն է

⁸ Նույն տեղում, N 3873, էջ 149: Տե՛ս նաև **Խառատյան Ա. Ա.**, Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Ե., 1989, էջ 261:

⁹ Մասիս, 1887, N 3877, էջ 180:

¹⁰ Նույն տեղում, 1888, N 3912, էջ 189:

«ժողովրդյան փափաքանաց համաձայն թերթ մը հրատարակել»¹¹: Իր ուղղության և լրագրողական սկզբունքների համեմատ Արփիարյանը «Մասիսը» խմբագրեց մինչև 1890 թ. հոկտեմբերի 15-ը (N 3951): Ազգային հիվանդանոցի շուրջ ընդհարվելով «Արևելքի» վարչության հետ՝ Արփիարյանը վերջնականապես հեռացավ «Մասիսից»: Նրանից հետո «Մասիսը» լույս տեսավ ընդամենը մի քանի համար, հավանաբար մինչև 1890 թ. վերջը, ապա ամբողջովին դադարեց 1891 թ. և վերահրատարակվեց միայն 1892 թ. հունվարի 4-ից՝ Գր. Զոհրապի խմբագրությամբ:

Իր խմբագրական հիշյալ սկզբունքներից ելնելով էր, որ Արփիարյանը հակադրվեց Ազգային ժողովում «ընկերական դիրք ունեցող» երեսփոխանական մի խմբակի՝ օսմանյան ծառայության մեջ գտնվող «էֆենտիների» դասի ներկայացուցիչներին, որոնք նիստերից իրենց հաճախակի բացակայություններով կազմալուծում էին այդ ժողովի աշխատանքները: Հետաքրքիր է, որ Արփիարյանը ի հայտ է բերում սրանց՝ արդեն ավանդույթի ուժ ստացած վարքագիծը: Այս խմբակի մասին նա գրում է. «Վերջի տասն տարիներու մեջ ազգային քաղաքական ժողովները իրենցմե կազմված են, բացարձակ տեր և իշխան եղած են»¹²: Ազգային ժողովի այն տարիների գործունեությունը հանգամանալի նկարագիր է գտել «Մասիսի» էջերում՝ հաճախ դիպուկ դիտողություններով, սկզբունքային առարկություններով և բանավիճային սուր հարցադրումներով: Այդպիսիք էին Երուսաղեմի պարտքի, կրթական համակարգի, գավառական առաջնորդների վերաբերյալ և այլ խնդիրներ: Ուշագրավ է կրոնական ժողովի քննադատությունը շաբաթաթերթի էջերում, որտեղ ցույց է տրվում, որ այդ ժողովը զբաղված է ոչ կարևոր մտահոգություններով, կորցրել է իր դեմքը և տեղի է տալիս քաղաքական ժողովի ճնշումներին, մինչդեռ կրոնավորը լուրջ դեր ունի բարոյականության, ժողովրդի առօրյա շատ խնդիրներում և ավելի մերձավոր ու ընդունելի է ժողովրդին, քան աշխարհականները: Արփիարյանն առաջարկում էր պատրաստել եկեղեցական բարեկարգումների ծրագիր, բարձրացնել հոգևորականության պատասխանատվությունը ժողովրդի նկատմամբ: Ոչ միայն «Մասիսը», այլև դրանից առաջ Հ. Պարոնյանի «Թատրոնը», «Արևելյան մամուլը» և այլ պարբերականներ հասարակական լուրջ կարևորություն էին տալիս առաջնորդական խնդրին՝ որոշ գավառներում առաջնորդական պաշտոնից խուսափող բարձրաստիճան եկեղեցականների յուրահատուկ բոյկոտին: «Խոնված Պոլսո փողոցներուն մեջ՝ եպիսկոպոսներն ու վարդապետները մոռցան իրենց կոչումը, ոչ թեմ, ոչ վանք, ոչ ժողովուրդ կճանչեն, այլ միայն վոսփորյան հանգստություն»¹³, - գրում է Արփիարյանը:

Փոխարենը, Արփիարյանը ժողովրդականություն վայելող հոգևորականի տիպար էր համարում Մ. Խրիմյանին՝ պաշտպանելով նրա պատրիարքական թեկնածությունը Հ. Վեհապետյանից հետո, գտնելով, որ նա նույն հաջողությամբ կարող է վարել պատրիարքական պաշտոնը, ինչպես առաջին անգամ 1869-1872

¹¹ Նույն տեղում, էջ 2:

¹² Նույն տեղում, N 3913, էջ 29:

¹³ Նույն տեղում, N 3920, էջ 34:

թթ.: Նա պաշտպանում էր և դրվատում Մատթեոս Եպիսկոպոս Իզմիրյանին, թեև վաղաժամ էր համարում նրա պատրիարքական պաշտոնավարությունը՝ հիմնավորելով նրանով, որ նա, իբրև Երուսաղեմի Սբ. Հակոբյանց վանքի միաբան, ավելի շատ օգտակար կարող է լինել վանքի պարտքը վճարելու գործում, քան Կ. Պոլսի պատրիարքական աթոռը զբաղեցնելով: Արփիարյանն առաջ քաշեց եկեղեցու և եկեղեցականների բարեփոխումների մի ծրագիր, որը թեև հիմքում անիրագործելի էր, սակայն հետաքրքիր էր նրանց ժողովրդականացման տեսակետից: Նրա կարծիքով, սովորական քահանային հնարավորություն պետք է տրվեր հասնելու մինչև պատրիարքի ու կաթողիկոսի աստիճանին, որովհետև ամուսնացած հոգևորականը ամուրիից շատ ավելի լավ կարող է հասկանալ ընտանեկան և, ի վերջո, ժողովրդի հետաքրքրություններն ու շահերը: «Պարզ տերտերը» պետք է կարողանա, ինչպես և ամուրի կղերը, բարձրանալ մինչև կաթողիկոսություն. «միայն այդ ժամանակ եկեղեցին կունենա արժանի հոգևորականության գունդ մը»¹⁴: Արփիարյանը կասկածում էր, որ հայ հոգևորականության մի զգալի մասը կարող է դիմակայել օտար դավանությունների քարոզչական ճնշումներին: Ոչ քիչ դեպքերում այդ անկարողությունն է պատճառ եղել, որ կաթողիկոսները, բողոքականները, իսկ Ռուսաստանում նաև ուղղափառները դավանափոխ անեն հայերին: Կողբում, նկատում է Արփիարյանը, ներկայումս տարածվում է ռուսադավանությունը, մինչդեռ մինչև վերջերս հազիվ 2-3 գյուղ էին այս շրջանում կրոնափոխ եղել: Բայց «ինչ որ հիսուն տարիներու մեջ ցանցառ պատահար էր, սկսած է սովորական դառնալ»¹⁵: Հրապարակախոսը եզրակացնում է, որ դրա մի կարևոր պատճառը պետք է համարել հայ հոգևորականության բարոյական ազդեցության կորուստը ժողովրդի մեջ: Արփիարյանը կշտամբում էր Թիֆլիսի հայ մամուլին այս իրողության հանդեպ անտարբեր վերաբերմունքի համար և այս տեսակետից շատ ավելի անկաշկանդ արևմտահայ մամուլին ու մտավորականությանը կոչ էր անում հնչեցնել տագնապի զանգը՝ այս վտանգի վրա հրավիրելով Ազգային ժողովի ուշադրությունը:

«Մասիսի», ինչպես և «Արևելքի» առաջադեմ գործիչների մտահոգությունների առանցքը 1880-ական թթ. մնում էր արևմտահայ գավառը՝ իր իրավագուրկ վիճակով և տնտեսական ու կրթական բազմաթիվ դժվարություններով: Ի տարբերություն նախորդ տասնամյակի՝ 1880-ական թթ. մամուլը Թուրքիայում ընկել էր համիդյան անօրինակ ծանր գրաքննության ներքո: Մամուլի լրատվությունից չքացել էին ազգային ու քաղաքական, անգամ տնտեսական բռնությունների ու հարստահարությունների մասին վկայող լուրերը, իշխանությունների չարաշահումների և անգամ կամայականությունների վերաբերյալ փաստերը: Մամուլից արմատախիլ արվեցին նրա քննադատական կարողությունները և, վերջին հաշվով՝ հասարակական ու վերլուծական հնարավորությունները: Մասնավորապես, հայ մամուլին թույլ էր տրվում վեր հանել, և այն էլ մի որոշ չափի սահմաններում, միայն ազգային կառույցների, եկեղեցու և նրա

¹⁴ Նույն տեղում, 1889, N 3926, էջ 38:

¹⁵ Նույն տեղում, N 3925, էջ 18:

գործիչների գործունեության քննադատելի կողմերը: Հայ լրագրողները ևս այս պայմաններում պետք է հակվեին առավելապես նկարագրական հրապարակումների, սակայն հմուտ հրապարակախոսներն ու լրագրողները, թեկուզ և այդ շրջանակում, արտահայտիչ ու հասկանալի կարողանում էին հասնել իրականության հուզող կողմերի որոշակի պատկերմանը: Հայերեն թերթերն ու հանդեսները առավել լուրջ ուշադրություն էին դարձնում Արևմտահայաստանի ժողովրդի բարքերի, ավանդույթների ու բարոյականության ուշագրավ կողմերին, նրա առօրյա կյանքին ու կենցաղին, կրթական կացությանը: Անտարակույս, այսպիսի մոտեցումները չէին կարող բավարարել քաղաքական ու տնտեսական հարաբերությունների խորքերը թափանցելու պահանջները, սակայն դրանք զուրկ չէին ճանաչողական նշանակությունից, որը և չէր կարող չունենալ իր դրական գործնական հետևանքները գավառում դպրոցական ցանցի ընդարձակման ու բարելավման, եկեղեցու և նրա գործիչների իրական գործունեության բացահայտման, ազգային կնճռոտ խնդիրներում գավառի շահերի առաջընթացի և քննարկումների տեսակետից: Այս իրողությունները 1880-ական թթ. Կ. Պոլսի հայ մամուլում առավել տեսանելի են «Արևելքի» և «Մասիսի» էջերում: «Մասիսը» բազմաթիվ ուշագրավ նյութեր է տպագրել Արևմտահայաստանի և հայաբնակ այլ վայրերի հայության զբաղմունքի, կրթական ու առտնին վիճակի մասին, հրապարակել ազգագրական հետաքրքիր տեղեկություններ: Գավառական կյանքի տարբեր երևույթների ու բնագավառների են անդրադարձել Ա. Արփիարյանը, Մ. Կյուրճյանը, Ա. Գալանթարյանը, Գ. Մազմանյանը, Ս. Թերզյանը և «Մասիսի» այլ հեղինակներ: Ա. Աստիկյանի «Երկրագործական գործիք» հոդվածում անուղղակիորեն քննադատվում են Թուրքիայի երկրագործության հետամնացությունը հողագործության ասպարեզում եվրոպական նորույթներից և նույնիսկ հին ձեռքբերումներից հեռու և անհաղորդ մնալը: Մինչդեռ, ըստ այս հեղինակի, Հայաստանի հողերը անմրցելի բերրիություն ունեն, որոնք այդպես էլ հողագործի համար փակ են մնում տեխնիկական անճարակության պատճառով: Հեղինակը գյուղի դժվարությունները հաղթահարելու, անգամ «անգութ աղաներեն» հայ երկրագործի ազատվելու համադարմանը տեսնում է գյուղատնտեսության մեքենայացման մեջ¹⁶: Դարձյալ երկրի տնտեսության ծանր վիճակի անուղղակի քննադատությունն է առկա Հ. Կերիկյանի և Մինաս Հ. Ֆ.-ի «Տեղական արհեստագործություն» հոդվածում: Քաղաքային ու գավառի արհեստների անկման պատճառը նրանք փաստորեն համարում էին օսմանյան պետության հնազանդությունը եվրոպական կապիտալին, դրա արդյունաբերական արտադրանքի պահանջներին: Դրա վկայությունն են համարում երկրում օտար ապրանքների վրա դրված ցածր մաքսերը՝ «եվրոպական ապրանազ և շինվածանյութոց նկատմամբ ընդունված չնչին «մաքսագինը», որով և տեղական արտադրությունը զրկվում է պետական հովանավորությունից և քայքայվում¹⁷:

Խարբերոցի հայ բրուտներին նվիրված մի հրապարակման մեջ հետաքրքիր տեղեկություններ կան Հյուսեյնիկ գյուղի հախճապակու արհեստանոցի

¹⁶ Նույն տեղում, 1887, N 3899, էջ 357-359:

¹⁷ Նույն տեղում, N 3901, էջ 374:

բարձրորակ արդյունքների մասին¹⁸: Հայ գավառի ու գյուղացու մի իրապատում նկարագիր է Հ. Տուտուխյանի «Հայ գյուղացիի հանգամանքները» հոդվածը, որտեղ ճշմարտացիորեն է պատկերված գյուղացու տնտեսական ու հոգևոր թշվառ վիճակը, որ ավելի են ծանրացնում աշխարհիկ ու կղերական ջոջերը, որոնք «գյուղացիին միսն ու մորթը, մարմինը քերթել միայն գործ ըրեր են իրենց»¹⁹: Գավառական վարժապետների իրավագուրկ և արհամարհված կացությունն է վերհանվում Մ. Չ.-ի «Գավառի հայ դասավանդող վիճակն» հոդվածում, որտեղ ցուցադրված են Եվդոկիայի «մենծ աղաներու» չարաշահումներն ու կամայականությունները ուսուցիչների և առհասարակ հասարակ ժողովրդի հանդեպ²⁰: Շաբաթաթերթում տպավորիչ կողմերով է ցույց տրվում Զիլեի (Թոքատի սանջակ) թաղականների ինքնագլխությունը ժողովրդի ունեցվածքը յուրացնելու գործում և վերջինիս ցույցերը նրանց դեմ²¹:

Հոդվածների մի այլ խմբում «Մասիս» անդրադարձել է Կ. Պոլսի, Ջմյուռնիայի, Տրապիզոնի և այլ քաղաքների արհեստավորության ու միջին այլ խավերի կյանքին, իր համակրական հրապարակումներով նրանց վրա ուղղել պատրիարքարանի և Ազգային ժողովի ուշադրությունը: «Մասիսի» ժողովրդավարական համակրանքներով պետք է բացատրել նրա լուրջ ուշադրությունը քաղաքի աշխատավորության, ոչ միայն Կ. Պոլսի արհեստավորների, այլև հայաբնակ գավառներից եկած պանդուխտների նկատմամբ: Այս թեմայով հրապարակումների մեջ հարկ է առանձնացնել Մ. Կյուրճյանի ակնարկաշարը՝ «Պանդուխտի կյանքեն» վերնագրով²²: Հրանդը պանդուխտի կյանքը ընթերցողի առջև է դնում, ամենայն մանրամասնությամբ՝ նրան քաղաք մղող տնտեսական վիճակը, անապահով և պատահականությունների ենթակա առօրյան մեծ քաղաքի խաներում, երբեմն հաջողվող տունդարձը, գյուղում նրան շարունակ սպասող հարազատների կարոտն ու թախիծը և այլն: Ակնարկաշարը հատկանշվում է զգացմունքայնությամբ և մարդասիրական ազնիվ զգացումներով՝ հայրենի եզերքներից թշվառների հանդեպ: Համաձայն «Մասիսի» ճշմարիտ հրապարակախոսության պահանջների՝ Հրանդը նոր լրագրությունը հարստացնում է կյանքի իրական պատկերներով, կենդանի և հյութեղ նկարագրություններով: Ավելացնենք, որ նրա որոշ ակնարկներ իրենց ամբողջականությամբ մոտենում են նորավեպի ժանրին: Նրա այս բնույթի գործերում անչափ տխուր են լրագրական ակնարկի և նորավեպի սահմանները: Հրանդն ընդգծում է պանդխտության սոցիալական անհուսության և մարդկային խորունկ դրաման, որ ապրում են կործանվող պանդուխտն ու հեռվում նրա հույսով ապրող հարազատները: «Մեր գավառացի երիտասարդը՝ տակավին պոլսական ցոփությանց մեջ չլվացված՝ շատ պատկառոտ են և այնչափ թանձր է իրենց պարկեշտության քողը, զոր դժվարավ կարելի է երերցնել: Դժվարին էլ

¹⁸ Նույն տեղում, N 3869, էջ 118-119:

¹⁹ Նույն տեղում, N 3877, էջ 184:

²⁰ Նույն տեղում, N 3903, էջ 390:

²¹ Նույն տեղում, N 3833, էջ 233:

²² Տե՛ս նույն տեղում, 1888, N 3921, էջ 50-53, 1889, N 3926, էջ 40-42, N 3924, էջ 14-16, 1890, N 3932, էջ 141-144 և այլն:

կիյնան, բայց եթե մի անգամ ինկան, դժվարին է ոտքի վրա հանել: Սարգիս սկսած էր տակավ վար իջնել և պետք է հասներ հատակը», - այսպես է բնութագրում նա իր հերոսի ողբերգական անկումը²³: Գավառում պանդուխտի ընտանիքի պատկերներով նա բացահայտում է ընդհանրապես հայ գյուղի սոցիալական քայքայման գործընթացը:

Հատկանշական է պանդուխտության թեմայով գրված՝ Արփիարյանի հերթական «Կյանքի պատկերներից» մեկը, որտեղ հրապարակախոսը բաց է անում Կ. Պոլսում հանգրվանած պանդուխտների կյանքի նոր ծալքերը՝ ի ցույց դնելով նրանց հարստահարող ազգակից վաշխառուի գիշատչական կերպարը²⁴: Ակնարկի հերոսը՝ Թորոսը, կործանվում է Ազգային հիվանդանոցում: Նկատենք, որ ակնարկում ներկայացված հիվանդանոցի իրական պատկերը, պանդուխտներին այնտեղ շրջապատող սառն ու անտարբեր վերաբերմունքի մերկացումը առաջացրեցին հիվանդանոցի «ազգասեր» հարուստ հոգաբարձուների զայրույթը: «Արևելքը» դարձավ այդ զայրույթի արտահայտիչը՝ ի դեմս նրա վարչության մեծահարուստ անդամների: «Արևելքը» Արփիարյանի վրա հարձակվեց հինգ ընդարձակ հոդվածներով՝ 1890 թ. սեպտեմբերի 20-28-ին: Իր պաշտպանած հոգաբարձուներին կրկնելով՝ «Արևելքը» պնդում էր, որ Արփիարյանը անձնական թշնամանք ունի նրանց նկատմամբ: Խմբագրական աշխատանքը այլևս անհնար էր իրականացնել «Արևելքի» վարչության շրջանակում, ուստի Արփիարյանը 1890 թ. հոկտեմբերի կեսին վերջնականապես հեռացավ «Մասիսից»²⁵:

«Մասիսը» շարունակում էր խորացնել արևելահայ հատվածի հետ Օսմանյան Թուրքիայում բնակվող հայերի ազգային, հոգևոր ու մշակութային կապերը²⁶, որ նոր որակներ էին ձեռք բերել դեռևս 1850-1870-ական թթ.: Շաբաթաթերթի խմբագիրը «Արևելքին» աշխատակցելու ժամանակից (1884) սերտ կապեր էր հաստատել Թիֆլիսի և Անդրկովկասի այլ քաղաքների հայ մտավորականության և մամուլի հետ: Այդ են վկայում նրա թղթակցությունները Թիֆլիսից, որտեղ նա մեկնել էր կաթողիկոսական ընտրությունները լուսաբանելու նպատակով, իբրև «Արևելքի» թղթակից: Այս առթիվ հարկ է առանձնացնել «Մշակի» գաղափարական ազդեցությունը «Արևելքի» և «Մասիսի» երիտասարդ գործիչների, մասնավորապես Արփիարյանի վրա: «Մշակն» իր մտրակողական ուղղությամբ, նրա ազգային ժողովրդավարական ծրագրերը և հատկապես Գր. Արծրունին ու Բաֆֆին խոր տպավորություն էին թողել Արփիարյանի վրա՝ կանխորոշելով նրա հետագա գաղափարական և գործնական («Միացյալ ընկերությունը հայոց») մերձեցումները «Մշակի» և նրա գործիչների հետ: Արփիարյանը «Մասիսում» ևս, ինչպես

²³ Նույն տեղում, 1890, N 3934, էջ 172: Լ. Գ. Մուրադյանը այս քրոնիկները ճշմարտացիորեն համարում է «սոցիալական վերլուծության հրապարակախոսական փայլուն նմուշներ» (տե՛ս Մուրադյան Լ. Գ., Արփիար Արփիարյան, կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1991, էջ 95):

²⁴ Մասիս, 1890, N 3947, էջ 389-396:

²⁵ «Մասիսի» մյուս համարներում Արփիարյանը է՛լ ավելի սուր մերկացումներ է անում՝ նշելով, որ հոգաբարձությունը սրբերով է դիմավորում քննադատական խոսքը, մինչդեռ իր նպատակը հիվանդանոցի բարվոքումն է (նույն տեղում, N 3948, էջ 2, N 3951, էջ 49-50):

²⁶ Ստեփանյան Գ. Խ., Արփիար Արփիարյան, Ե., 1955, էջ 7:

«Արևելքում» ընդարձակ լրատվություն է տպագրել արևելահայ մտավոր ու գրական կյանքի իրողությունների վերաբերյալ, մշտական տեղեկություններ Թիֆլիսի գրողների գրական ստեղծագործությունների մասին, հոդվածներ և գրական գործեր արտասույել «Մշակից»: «Մասիսը» Թիֆլիսում ուներ իր արևելահայ թղթակիցը, որն ընդարձակ տեղեկություններ և մեկնաբանություններ էր տալիս Անդրկովկասի հայության կյանքի ամենատարբեր կողմերի, այդ թվում՝ մամուլի և հասարակական ու գրական գործիչների և այլնի մասին: «Մասիսի» այս բովանդակության նյութերից արևմտահայ ընթերցողը բավական տեղեկատվություններ էր ստանում Բաֆֆու «Կայծերի» նկատմամբ գրաքննական դժվարություններ հարուցելու, «Մեղու Հայաստանի» թերթի ուղղության և նյութերի, այս վերջինի և «Մշակի» հակասությունների, Էջմիածնի կաթողիկոսության կացության, արևմտահայ դպրոցների վերաբերյալ: Ուշագրավ են Ռ. Հ.-ի թղթակցությունները, որտեղ, ի դեպ, անաչառ քննադատական հատվածներ կան ռուսական արտաքին քաղաքականության մեջ ազգային ճնշումների, հայ մամուլի և գրականության նկատմամբ կիրառված գրաքննության հարկադրանքի մասին: Հետաքրքիր է, որ այս թղթակիցը փաստորեն պաշտպանում է մշակական ուղղությունը և հարկ եղած դեպքում չի զլանում քննադատական դիտողություններ անել արևելահայ պահպանողականությանը և նրա մամուլին: Քննադատական արժեք ունեն «Մասիսի» մի ամբողջ շարք հրապարակումները արևելահայ դպրոցների նկատմամբ ռուսների վարած քաղաքականության մասին: Շաբաթաթերթը հատկապես կանգ էր առնում Կովկասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովի՝ Կովկասի ազգությունների, այդ թվում և՛ հայերի դպրոցների հանդեպ ցուցաբերած ճնշող վերաբերմունքի վրա: Հետագայում ևս «Մասիս» անդրադարձավ Կովկասի իշխանությունների կողմից հայկական դպրոցների հանդեպ կիրառված միջոցառումների, դպրոցական նոր կանոնադրության, հայկական դպրոցներում ռուսերենի ազդեցությունն ուժեղացնելու և այլ խնդիրներին՝ պաշտպանելով արևելահայության իրավունքները և բարձրացած բողոքը՝ ընդդեմ հիշյալ ճնշումների: Ռ. Հ.-ն նախապես քննադատում էր Մակար կաթողիկոսի համակերպվող կամ անորոշ դիրքորոշումը ազգային դպրոցների շահերի պաշտպանության հարցում, սակայն հետագայում «Մասիսը» անաչառ գնահատեց կաթողիկոսի ընդդիմության դրսևորումները՝ ուղղված այդ ճնշումների դեմ: Արփիարյանը պետք է դրվատեր Մակար կաթողիկոսին՝ հաշվի առնելով նրա ջանքերը ի պաշտպանություն հայ դպրոցի իրավունքների, նկատելով, որ «Ժողովուրդը կսկսի տաքնալ կաթողիկոսի համար»²⁷: Հակառակ գրաքննական մամլիչի՝ «Մասիսը» Թիֆլիսի հայ հրատարակություններից քաղվածաբար հատվածներ էր հրապարակում ռուսներին հայերի մատուցած ծառայությունների, վերջին ռուս-պարսկական պատերազմում (1827-1828) ռուսների հետ նրանց համագործակցության մասին²⁸: Նույն կերպ «Մասիսը» բերում էր վրաց եկեղեցու նկատմամբ կիրառված կրոնական ճնշումների օրինակներ: Նույն սկզբունքներից ելնելով՝ Արփիարյանը շաբաթաթերթում արևմտահայերենի վերածած և

²⁷ Մասիս, 1887, N 3867, էջ 101:

²⁸ Նույն տեղում, N 3860, էջ 48:

համառոտաձև տպագրեց Պ. Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» վեպը, որը թարգմանել և «Մշակում» հրատարակել էր Բաֆֆին:

Ռուսաստանում ազգային ճնշումները բացահայտող և դատապարտող այս ուղեգծի բնութագիրը միակողմանի կլինեք, եթե անտեսվեր Արփիարյանի անկողմնակալ վերաբերմունքը ռուսաց մշակույթի և գիտության՝ արևելահայերի վրա թողած բարենպաստ ազդեցության նկատմամբ: Ռուսների օրինակով, ըստ նրա, բարձրանում է նաև արևելահայերի միջավայրում մտավորականության հանդեպ ակնածալի վերաբերմունքը: Գ. Չմկյանին Թիֆլիսում մեծարելու առթիվ Արփիարյանը նկատում էր, որ դրա հակառակ պատկերն է երևում Կ. Պոլսում, որտեղ անտեսված և մոռացության է մատնված մեծահամբավ Արուսյակ Փափազյանը: «Որպիսի հակադրություն մեր և ռուսահայոց միջև: Եվ սակայն, մի՞թե տիկին Արուսյակ հայ դերասանության ստեղծիչը չէ»²⁹, - գրում է Արփիարյանը:

Ժամանակին ճիշտ է նկատված, որ Արփիարյանը հստակ տարբերում էր ռուս առաջավոր մտավորականության դիրքորոշումը ռուսական պաշտոնական քաղաքականությունից՝ եզրակացնելով, որ «ռուս ժողովուրդը հավան չէ յուր չինովնիկներուն հայատյաց քաղաքականության», և որ հայերի դեմ «մերթ ընդ մերթ իրենց հարվածները կտեղան» միայն խավարամիտները³⁰: Բարձր գնահատելով ռուս առաջավոր մտավորականության համակրական վերաբերմունքը հայերի հանդեպ՝ «Մասիսը» «Մշակից» արտատպել է «Պ. Ելիսեն և հայք» հոդվածը Ռուսաստանի Կայսերական աշխարհագրական ընկերությունում նշանավոր ճանապարհորդի տված հաշվետվության մասին: «Մասիսը» շատ բարձր գնահատեց ռուս գրականությունը՝ ի դեմս Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ֆ. Դոստոևսկու, Լ. Տոլստոյի ստեղծագործությունների, և շատ բան արեց այդ գրականությունը թարգմանելու արևմտահայության մեջ և ժողովրդականացնելու գործում³¹:

Հարկ է նշել, սակայն, որ լրագրական-հրապարակախոսական լուրջ գործունեություն ծավալելով հայ երկու խոշոր հատվածների հոգևոր ու մտավոր ներթափանցման ասպարեզում ազգային ընդհանուր մշակույթի զարգացման ջատագով լինելով հանդերձ՝ Արփիարյանը նկատել է նաև արևելահայության որոշ ներկայացուցիչների մեջ տեղ գտած մեծամիտ վերաբերմունքը պոլսահայ «հոսիոսների» հանդեպ: Նկատել է և իրավացիորեն ծաղրել այդ արգահատելի երևույթը: Նա երգիծում է կենցաղային «գաղափարական» այն զավեշտական ցուցամոլությունը, որ առկա է մի քանի թիֆլիսահայերի կեցվածքում: Ֆելիետոնի հերոսները հրաժարվում են մի երկու ռուբլի վճարել Այա Սոֆիա մտնելու համար, և երբ հյուրընկալները այս առթիվ իրենց զարմանքն են հայտնում (նրանք գնալու են հեռավոր Վիեննա, արժե՞ սրտնեղել մեկ-երկու ռուբլու պատճառով), կովկասցի հայերը գրպաններից հանում են երկուական ռուբլի և հանդիսավորապես պատռում ասելով. «մենք խնայողության համար չէ, այլ սկզբունքի համար է... որ

²⁹ Նույն տեղում, N 3875, էջ 168:

³⁰ Նույն տեղում, N 3870, էջ 125: Տե՛ս **Սուրադյան Լ. Գ.**, նշվ. աշխ., էջ 90-91:

³¹ Հայ նոր գրականության պատմություն, հ. 4 Ե., 1972, էջ 379:

չենք վճարում: Խո մենք պոլսեցի հոսսոս չենք, որ սկզբունքից, ուղղութենից գուրկ լինենք. մենք սկզբունք ունենք, մենք «Մշակ» ենք կարդում, դուք «Մշակ» չունեք, ուղղություն չունեք»³²:

Արևելահայերի այս կերպարներին ենք հանդիպում Արփիարյանի՝ դրանից առաջ տպագրած «Պոլիս եկող ռուսահայր» ֆելիետոնում: Այստեղ ևս նույն թեթևամիտ, պոլսահայ կյանքին անտեղյակ, բայց իր դատողություններում անվերապահ և մեծամիտ կերպարն է: Նախ, նա հիանում է «Արևելք» թերթով, ապա անցնում իր ուղղագրական քարոզներին. «Խնդրեմ, ինչու ուղիղ չենք կրում: Ինչու Պիզմարք եք կրում, և ոչ թե Բիսմարկ, ինչու Պուլլարիա և ոչ թե Բուլգարիա»: Եվ երբ նրան առարկում են, «այդ օրերին կսկսի հայտարարել, թե «Արևելք» դարտակ թերթ է, սկզբունքից գուրկ, ոչ մի ուղղության հետևող՝ «Ախր մի թերթ, որի խմբագիրն ոչ իսկ իրան ազկանունը կրել կիտե, Դամադյան և ոչ թե Տամատյան»³³: Հիրավի, 1880-ական թթ. «Մասիսը» տպագրել է Արփիարյանի աչքի ընկնող երգիծական մի քանի գործեր, որոնք, չնայած իրենց ակնառու արվեստին, անտեսվել են հայ երգիծանքի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում:

1880-ական թթ. երկրորդ կեսի «Մասիսը» նշանակալիորեն նպաստել է հայ ռեալիստական գրականության կայացման և զարգացման գործին: Հայկական ռեալիզմը, որպես նոր գրական ուղղություն, ի հայտ էր գալիս իբրև հայրենաճանաչության՝ Արևմտյան Հայաստանը ոչ միայն հոգևոր իմաստով, այլև շոշափելիորեն ճանաչելու, նրա իրական կացությունը բարոյական ու մտավոր համադրությամբ ընկալելու արդյունավետ մեթոդ: Ռեալիստական գրական շարժումը դրան էր միացնում իրական անձանց կամ հարաբերությունների կերպավորումը՝ ձգտելով այդ իրականն արձանագրել գրականության բարոյական ու գեղագիտական հյուսվածքի մեջ: Ռեալիստական գրականության մեջ գավառը պատկերվում է անբռնազրոս ու բնական կերպով՝ բեկվելով մարդու հոգեբանության, բարոյական պատկերացումների, մտածողության մեջ և, ի վերջո, վարքագծի դրսևորումներում:

«Մասիսի» հեղինակներին՝ Արփիարյանին, Զոհրապին, Բաշայանին, Տեմիրճիպաշյանին (նրա ռոմանտիկական ու միստիկական հակումները մի կողմ թողած) միացնում է իրականը և գործնականը վերարտադրելու նպատակը: Նրանցից յուրաքանչյուրի ստեղծագործական անհատականությունը ընդգծելով հանդերձ՝ թերևս արդեն գուտ ձևի տեսակետից, այն կարելի է հիմնավորել կատարման արվեստի անհատականությամբ: Այս վերջինը իր խորքում բխում էր եվրոպական, առավել ևս՝ ֆրանսիական ռեալիզմի նրբագեղությունից, անհրաժեշտ բովանդակությունը գտնված ձևի մեջ գետեղելու այն արվեստից, որից ազդվելով՝ արևմտահայ գրականությունը դառնում էր սեփական պատկերն ու մտածողությունը որոնող գրականություն: Ըստ երևույթին, այստեղ պետք է

³² Մասիս, 1889, N 3926, էջ 47:

³³ Նույն տեղում, 1887, N3873, էջ 150:

կարևորել գրական ուսումնառության հիմնահարցը. 1880-ական թթ. արևմտահայ ռեալիստները («Արևելքում» և ապա «Մասիսում») հետազոտման արժանի և խոր ազդեցություն են կրել ֆրանսիական ռեալիստական գրականությունից, որ ժամանակին է նկատել Արշակ Չոպանյանը: Բավական է միայն թերթել այս (և հետագա) արևմտահայ մամուլը՝ համոզվելու համար, թե ինչ ձևի տեսակետից ինչ անբավ հարստություն է պարունակում նրա թերթոնի՝ գլխավորապես ֆրանսիական թարգմանական գրականության բաժինը, մասնավորապես նորավեպի ժանրային տարածականության առումով: Գործնական իմաստով այդ հեղեղի մեջ կարող էին իրենց ստեղծագործական ինքնությունից զրկվել շատ շնորհալի սկսնակներ, բայց առավել տաղանդավորները այդպիսի ազդեցության շնորհիվ էր նաև, որ ստեղծեցին մի նոր՝ ռեալիստական ուղղություն՝ հայ գրականության արևմտյան թևում:

Արևմտահայ նոր լրագրությունը բնութագրելու տեսակետից մեզ առավել հետաքրքրում են «Մասիսի» հեղինակների հրապարակախոսական հոդվածներն ու ակնարկները: Արփիարյանը «Մասիսում» իր խմբագրական աշխատանքը սկսում էր չափված-ձևված, հայեցողական ու տաղտկալի լրագրության դեմ մղած բանավեճով. «Ավելի կսիրեմ թերթ մը, որ վնասակար կըլլա խորթեղի կերպով, քան թե թերթ մը, որ օգուտ կմատուցանե ձանձրացնելով», - գրում է նա՝ ակնհայտ առավելություն տալով ձևի տեսակետից անսովոր մատուցմանը³⁴: Գալով գաղափարական կողմին՝ «Մասիսի» խմբագիրը պաշտպանում է այլակարծության, տարբեր սկզբունքների և մոտեցումների համադրումը և բախումները միևնույն հրատարակության մեջ: Նկատի առնելով 1884-1887 թթ. «Արևելքի» գաղափարական հայտնի երկփեղկվածությունը, ուրեմն և լայնախոհությունը՝ Արփիարյանը նկատում էր, որ «Արևելքի» մեջ միայն նրա վարչության կարծիքները չեն արտահայտված, այլև հակառակ տեսակետները, և կարևորն այն է, որ այդ հակադրությունը «անձնականություններ և թշնամական բացատրություններ» չպարունակեր: Սրանով հանդերձ՝ պետք է ասել, որ ոչ «Մասիսը» և ոչ էլ «Արևելքը» երկար ժամանակ չկարողացան պահպանել այլակարծության սկզբունքը լրագրության մեջ: Տարբեր կարծիքների հավասարակշռությունը նկատելի է միայն 1884-1888 թթ. «Արևելքում», իսկ ինչ վերաբերում է «Մասիսին», ապա Արփիարյանի խմբագրության ընթացքում՝ 1887-1890 թթ. (չհաշված այն կարճ միջոցը, երբ նա թողել էր խմբագրի պաշտոնը), այդ շաբաթաթերթը տպագրում էր միայն իր՝ Արփիարյանի տեսակետներին համապատասխանող նյութեր: Այս միակողմանիությամբ հանդերձ՝ «Մասիսի» անաչառ և հանդուգն հոդվածները լրացնում էին «Արևելքի» բաց արած այն «նոր լրագրության» հունը, որի մասին խոսում էր Գր. Զոհրապը: Անկողմնակալ վերաբերմունք փաստերի նկատմամբ և քննադատական ուղղություն՝ այս ուղիով էր ընթանում «Մասիսը» 1880-ական թթ. երկրորդ կեսին:

«Մասիսի» մյուս հրապարակախոսները յուրովի են իմաստավորում այս ընթացքը: Առաջին անգամ «Մասիսում» տպագրված՝ Գր. Զոհրապի թղթակցության

³⁴ Նույն տեղում, N 3855, էջ 4:

մեջ, որը, ըստ էության, ակնարկ է³⁵, համակրական և ողբերգական գծերով է պատկերված Զմյուռնիայի «Արշալույս արարատյան» թերթի վերջին խմբագիր Հարություն Սվաճյանը: Զոհրապը դիմել է թանձր հակադրությունների լրագրական մեթոդին, և հենց այս հակադրություններն են, որ կողմնորոշում են ընթերցողին այն ժամանակ, երբ ինքը՝ հեղինակը, քննադատական որևէ խոսք չի ասում: Զմյուռնիայի վիճակում է, որ գործում է «առաջնորդ մը, որու համբավը զաշխարհ կթնդացնէ (նկատի ունի Մ. արք. Մուրատյանցին - Ս. Գ.) ու անդին հալածական գրագետ ու լրագրապետ մը (Հ. Սվաճյանը - Ս. Գ.) ցավոց ու տառապանաց մահճին վրա մոռցված. վերջապես մեկ կողմը՝ «Արևելյան մամուլն» հզոր պաշտպաններու կոթնած ու անոր մոտ խորտակված գրիչ մը ու խեղդված ձայն մը՝ «Արշալույսը»³⁶: Նույն անբռնագրոս գրչով է Զոհրապը պատկերում 1850-ական թթ. Պեշկեթաշի Մաքրուհյան վարժարանը, դպրոցական բարքերը, այն ժամանակվա թատրոնի անսահմանորեն միամիտ և սրտացավ հայ հանդիսատեսին: Զոհրապի լրագրության ուժը նրա անկեղծությունն ու անմիջականությունն է, որին, թերևս, չէր կարող հավասարվել «Մասիսի» կամ «Արևելքի» որևէ այլ լրագրող: Նրա գրելաձևի մյուս առանձնահատկությունը, կարծում ենք, նուրբ դիտարկումների վրա հենվող ընդհանրացումներն են, մեղմ հումորը, խաղաղ հայեցվածքը երևույթների առջև, որը խորքում, սակայն, պահում է ինչ-որ թաքուն մի տագնապ, դրամա՝ հար և նման իր նովելների ոճին: Ա. Արփիարյանի հետ միասին, բայց և իր անկրկնելի ոճով, Զոհրապը ակնարկի ժանրը իմաստավորում է գրավչությամբ, պարզությամբ ու անկեղծությամբ, որտեղ մատչելի են լրագրողի և՛ ընկալումները, և՛ խոսքը: 1888-1890 թթ. «Մասիսում» տպագրվեցին Զոհրապի «Այրին», «Փոթորիկը» և «Պարահանդեսին վաղորդայնը» նորավեպերը: Ժանրի տեսակետից ևս «Մասիսը» նորույթներ էր մատուցում իր ընթերցողին՝ տպագրելով Ե. Տեմիրճիպաշյանի «Աղջկան մը օրագիրն» («Մելանիա» ստորագրությամբ) նշանավոր գործը: Տեմիրճիպաշյանն իր միստիկական իմաստասիրական խորհրդածությունները զուգադրում է իրական անձանց ու դեմքերի հետաքրքիր բնութագրերին, որոնք գործում էին ժամանակի պոլսահայ իրականության մեջ՝ իբրև հանրաճանաչ անձինք (Մկրտիչ Էսայան, Հակոբ Գուրգեն, Հակոբ Պարոնյան և այլք): Հազիվ թե կարելի լիներ առարկել Ե. Տեմիրճիպաշյանին, երբ նա Մելանիայի մոր շուրթերով բնութագրում է իր՝ Տեմիրճիպաշյանի և Ա. Արփիարյանի հրապարակախոսությունը. «Անձուկ խնամություն մը կա այդ երկու մտաց մեջ, և երկու մտաց ալ հատկանիշն է անկախություն, նաև սովորականին դեմ խորին հակակրություն՝ կքննադատեն առանց դիրքի նկատողության և գրական քմահաճույքի մը կզոհեն իրենց նյութական շահն... նոր, նոր այս է իրենց նշանաբանն»³⁷: Հարկ է միաժամանակ նկատել, որ Ա. Արփիարյանը խստորեն սահմանազատվում էր Ե. Տեմիրճիպաշյանի՝ «արհեստական» միստիկական տրամադրություններով համակված գրականությունից³⁸:

³⁵ Նույն տեղում, N 3858, էջ 29-30:

³⁶ Նույն տեղում, էջ 30:

³⁷ Նույն տեղում, N 3857, էջ 23:

³⁸ Ստեփանյան Գ. Խ., նշվ. աշխ., էջ 157:

«Մասիսում» ակնարկի ժանրն իր զարգացումն էր ապրում նաև Լ. Բաշալյանի տաղանդավոր աշխատակցության շնորհիվ: Այս հեղինակի ակնարկները ներքին մի կապ ունեն նրա նովելների հետ՝ իրենց իրական հենքով և իրողությունների զննությամբ կարծես նախապատրաստելով սյուժեի մեջ ամփոփված ավելի ընդհանրական դատողությունները: «Մեռելոց օրը Սկյուտարի գերեզմանատան մեջ» ակնարկում Լ. Բաշալյանին տազնապ է պատճառում մարդկանց հոգիների ամայացման, անտարբերության և անկարեկիր վերաբերմունքի ծավալումը՝ գերեզմանատանը իր գործը արհեստ դարձրած քահանայի օրինակով³⁹: Սառն ու անհոգի միջավայրի թանձր պատկերը, իբրև վերոհիշյալի առարկայական արտացոլում, առկա է այս հեղինակի «Դիտողությունք և դատողությունք» ակնարկում⁴⁰, որ և սևեռուն գաղափար է դարձել արդեն վարպետ գեղագետի գրչով գրված նրա՝ «Դագադին մը ետևեն», «Անժելա», «Պալլիսի Գեորգ», «Սյուզենիի վարպետը» նորավեպերում: Վերջին երկու նովելները ճանաչվել են իբրև հայ ռեալիստական արձակի փայլուն էջեր⁴¹:

Թուրքիայի հայ լրագրության պատմության առաջին հեղինակներից պետք է համարել Մ. Նորիկյանին, որի «Օրագիր և լրագրություն» ուսումնասիրությունը լույս տեսավ «Մասիսի» 1885-1887 թթ. համարներում: Մ. Նորիկյանը հանգամանորեն անդրադարձել է եվրոպական երկրների և ԱՄՆ-ի լրագրության պատմությանը, բնութագրել առանձնապես կարևոր հրատարակությունները. կարծում ենք՝ այդ հետազոտությունը առաջինն է լրագրության պատմությանը նվիրված հայերեն ուսումնասիրությունների մեջ, եթե ոչ նաև վերջինը: Հատկապես կարևոր են Նորիկյանի աշխատության այն հատվածները, որոնք առնչվում են թուրքական մամուլի (ֆրանսիացիների ձեռքով), ինչպես և հայ մամուլի սկզբնավորմանն ու զարգացմանը, թուրքական մամուլի հայ գործիչներին, որոնք այսօր մոռացության են մատնված մամուլի թուրքական պատմաբանների և, ցավոք, հայ մամուլի պատմաբանների կողմից: Նորիկյանը ուսումնասիրությունը հասցնում է մինչև իր ժամանակները՝ 1880-ական թթ.: Անկասկած, այս աշխատանքը այսօր ևս կարող է օգտակար լինել լրագրության պատմությունը հետազոտողների համար:

³⁹ Մասիս, 1890, N 3939, էջ 255-256:

⁴⁰ Նույն տեղում, N 3951, էջ 62-64:

⁴¹ **Մանուկյան Ս. Ա.**, Լևոն Բաշալյան, Ե., 1969, էջ 130-131: Հազիվ թե կարելի լիներ համաձայնվել այն կարծիքի հետ, թե Բաշալյանի «դեմոկրատական ու ռեալիստական ըմբռնողությունը սահմանափակվում է լիբերալիզմով», որովհետև նա «չի որոնում չարիքը վերացնելու միջոցներ» (**Բաշալյան Լ.**, Ընտիր երկեր, Ե., 1962, էջ 7, Վ. Դաքեսյանի Առաջաբանը): Բայց չարիքի ցուցադրումն արդեն մղում է այն վերացնելու միջոցների մասին խորհել, որ և ոչնչով չի հակասում ռեալիստական գրականության բնույթին: Հիմնավոր է մինչդեռ Գ. Դանիելյանի այն դիտողությունը, որ Լ. Բաշալյանը կարողացել է հաղթահարել ռոմանտիկական դպրոցի ազդեցությունը՝ «կերպարի ու սյուժեի կառուցման» տեսակետից (**Դանիելյան Գ.**, Երեք դիմանկար, Ե., 1982, էջ 12):

Այսպիսով, Ա. Արփիարյանի խմբագրության տարիներին (1887-1890 թթ.) «Մասիս» շաբաթաթերթը զարգացման նոր մղումներ տվեց ոչ միայն հայ նոր գրականությանն ու դրա տեսական հիմնավորմանը, այլև, «Արևելք» թերթի հետ միասին, հայ լրագրությանը: Վերջինս «Մասիսում» ապրեց ոչ միայն իր ժանրային-տիպաբանական ընդլայնման, այլև որոշակիացման շրջանը, ձեռք բերեց լրատվական նոր արժեքներ: Կարծում ենք, որ արևմտահայ ռեալիստական գրականության զարգացումը անխզելիորեն կապված է այս նոր լրագրության հետ, որ կարելի է անվանել իրատեսական լրագրություն:

ЕЖЕНЕДЕЛЬНИК “МАСИС” В ГОДЫ ЕГО РЕДАКТИРОВАНИЯ АРПИАРОМ АРПИАРЯНОМ

СОГОМОНЯН Г. А.

Резюме

В годы редакторства А. Арпиаряна (январь-июнь 1887, май 1888 - октябрь 1890) еженедельник “Масис” пережил новый этап развития как в жанровом, так и информационном аспектах.

С журналом сотрудничали выдающиеся армянские писатели Г. Зограб, Л. Башалян, Т. Камсаракан, Грант (М. Кюрчян), Е. Демирчибашян и другие. В своих публикациях они раскрывали новые, неизвестные до этого пласты экономической жизни, быта, морально-нравственных устоев западноармянского общества. Все это выявляло истинную картину реальной жизни армян, проживающих в Османской Турции. Развитие западноармянской реалистической литературы 1880-х гг. связано именно с новой “реалистической журналистикой” “Аревелка” и “Масиса”.